Մասնագիտության նկարագիրը	
Պաշտոնի /զբաղմունքի/ անվանումը	Մասնագիտությունը՝ 1015.01.5 «Զբոսաշրջություն (ըստ ճյուղերի)» Որակավորումը՝ 1015.01.01.5 «Մասնագետ՝ զբոսաշրջային ծառայությունների»
I. Դերը	Զբոսաշրջային ապրանքի ձևավորում, խթանում և իրացում, զբոսաշրջային համալիր ծառայությունների կազմակերպում:
II. Խնդիրների բնագավառները	
<u>Խնդիրների բնագավառ 1</u>. *Զբոսաշրջային ծառայությունների կարիքների բացահայտում և շուկայի ուսումնասիրություն*	
Աշխատանքային գործընթացը	1. տվյալ տարածաշրջանում զբոսաշրջային ծառայությունների կարիքների բացահայտում, 2. զբոսաշրջային ոլորտի շուկայի զարգացման խնդիրների, միտումների և հեռանկարների ուսումնասիրում, 3. տվյալ տարածաշրջանում մրցակիցների գործունեության և նրանց ապրանքային տեսականու, ծառայությունների մատուցման համար սահմանած գների վերաբերյալ տեղեկատվություն հավաքագրում, 4. սպառողների պահանջների և ցանկությունների վերլուծություն, 5. հավաքված տեղեկատվության ամփոփում և առաջարկությունների փաթեթի պատրաստում:
Կատարման չափանիշներ	1. բացահայտված են տվյալ տարածաշրջանում զբոսաշրջային ծառայությունների կարիքները, 2. ուսումնասիրված են զբոսաշրջային ոլորտի շուկայի զարգացման խնդիրները, միտումները և հեռանկարները, 3. հավաքագրված և ամբողջացված է տվյալ տարածաշրջանում մրցակիցների գործունեության և նրանց ապրանքային տեսականու, ծառայությունների մատուցման համար սահմանած գների վերաբերյալ տեղեկատվությունը, 4. առկա է սպառողների պահանջների և ցանկությունների վերլուծությունը, 5. ղեկավարությանը ներկայացված է հավաքված տեղեկատվության վերաբերյալ առաջարկությունների փաթեթը:
<u>Խնդիրների բնագավառ 2.</u> *Գործընկերային կապերի հաստատում*	
Աշխատանքային գործընթացը	1. զբոսաշրջային ապրանքի համար անհրաժեշտ նյութերի և ծառայությունների մատակարարների (տրանսպորտային, կացության, սննդի և այլ ծառայությունների) անվանացանկի հստակեցում, 2. պատվերների պայմանների (կարգ, ժամկետներ, հաճախականություն,

	փաստաթղթավորում, գներ, իրացման ծավալների հետ կապված արտոնություններ և այլն) համաձայնեցում, 3. զբոսաշրջային ապրանքի իրացման միջնորդների ընտրություն, 4. մատակարարների հետ իրացման պայմանների վերջնական համաձայնեցում:
Կատարման չափանիշներ	1. հստակեցված է զբոսաշրջային ապրանքի համար անհրաժեշտ նյութերի և ծառայությունների մատակարարների (տրանսպորտային, կացության, սննդի և այլ ծառայությունների) անվանացանկը, 2. համաձայնեցված են պատվերների պայմանները (կարգը, ժամկետները, հաճախականությունը, փաստաթղթավորումը, գները, իրացման ծավալների հետ կապված արտոնությունները և այլն), 3. ընտրված են զբոսաշրջային ապրանքի իրացման միջնորդները, 4. համաձայանեցված են մատակարարների հետ իրացման պայմանները:
<u>Խնդիրների բնագավառ 3.</u> *Զբոսաշրջային փաթեթի մշակում*	
Աշխատանքային գործընթացը	1. զբոսաշրջային ապրանքի հայեցակարգի ձևավորում՝ տվյալ կազմակերպության ապրանքային քաղաքականության համապատասխան, 2. զբոսաշրջային շրջագայության տեսակի ընտրություն՝ համալրված տվյալ կազմակեպության և համագործակցող մատակարարների ծառայություններով, 3. ծառայությունների լավագույն համակցության ընտրություն՝ ինքնարժեքի և սպառողների ցանկությունների ու պահանջմունքների բավարարման տեսանկյունից, 4. զբոսաշրջային փաթեթի ձևավորում և փորձարկում՝ հաշվարկելով գինը և սահմանելով իրացման գնային միջակայքը, 5. վերջնական փաթեթի կազմում և ներկայացում:
Կատարման չափանիշներ	1. ձևավորված է զբոսաշրջային ապրանքի հայեցակարգը՝ տվյալ կազմակերպության ապրանքային քաղաքականության համապատասխան, 2. ընտրված է զբոսաշրջային շրջագայության տեսակը՝ համալրված տվյալ կազմակեպության և համագործակցող մատակարարների ծառայություններով, 3. ընտրված է ծառայությունների լավագույն համակցությունը՝ ինքնարժեքի և սպառողների ցանկությունների ու պահանջմունքների բավարարման տեսանկյունից, 4. ձևավորված և փորձարկված է զբոսաշրջային փաթեթը՝ հաշվարկված

	գնով և սահմանված իրացման գնային միջակայքով, 5. ղեկավարությանը ներկայացված է վերջնական փաթեթը:
<u>Խնդիրների բնագավառ 4.</u> ***Զբոսաշրջային ապրանքի խթանում և իրացում***	
Աշխատանքային գործընթացը	1. զբոսաշրջային ապրանքի վերաբերյալ տեղեկատվության տարածման (հանրության իրազեկման և գովազդային միջոցառումներ) կազմակերպում, 2. գովազդային և տեղեկատվական նյութերի ձևավորում և մշակում, 3. զբոսաշրջային ապրանքի վաճառքի իրականացում, 4. միջնորդների և անհատ հաճախորդների հետ հետադարձ կապի ապահովում, 5. ընթացիկ գործընթացների կատարման ժամանակացույցի պահպանման մշտադիտարկում:
Կատարման չափանիշներ	1. զբոսաշրջային ապրանքի հանրային իրազեկումն ու գովազդը կազմակերպված է, 2. ձևավորված և մշակված են գովազդային և տեղեկատվական նյութերը, 3. իրականացված է զբոսաշրջային ապրանքի վաճառքը, 4. ապահովված է միջնորդների և անհատ հաճախորդների հետ հետադարձ կապը, 5. իրականացված է մշտադիտարկում՝ ընթացիկ գործընթացների կատարման ժամանակացույցի պահպանման համար:
<u>Խնդիրների բնագավառ 5.</u> ***Զբոսաշրջիկներին տրամադրվող ծառայությունների մատուցում***	
Աշխատանքային գործընթացը	1. շրջագայության ընթացքում կեցության ծառայությունների մատուցում, 2. շրջագայության ընթացքում սննդի մատուցման ծառայությունների մատուցում, 3. շրջագայության ընթացքում տեղափոխման ծառայությունների մատուցում, 4. զբոսաշրջային համալիր ծառայությունների մատուցում:
Կատարման չափանիշներ	1. մատուցված են շրջագայության ընթացքում տրամադրվող կեցության ծառայությունները, 2. մատուցված են շրջագայության ընթացքում տրամադրվող սննդի ծառայությունները, 3. մատուցված են շրջագայության ընթացքում տրամադրվող տեղափոխման ծառայությունները, 4. մատուցված են զբոսաշրջային համալիր ծառայությունները:
III.Պատասխանատվությունը /անմիջական	Զբոսաշրջային ծառայությունների մասնագետը պատասխանատու է զբոսաշրջային ծառայությունների կարիքների բացահայտման,

պատասխանատվության շրջանակ/	գործընկերային կապերի հաստատման, զբոսաշրջային փաթեթների ձևավորման և մշակման, դրանց խթանման և իրացման, ներկայացված տեղեկությունների ճշտության, զբոսաշրջիկներին տրամադրվող կեցության, սննդի, տեղափոխման և այլ համալիր ծառայությունների մատուցման համար:
IV. Լեզուները	հայերեն - լավ երկու օտար լեզու- բավարար՝ հաղորդակցվելու և մասնագիտական հասկացությունները թարգմանելու համար (որակավորման պահանջներին համապատասխան)
V. Համակարգիչը	MS Word-լավ MS Excel-բավարար Internet Explorer – բավարար Google maps - լավ
VI. Գիտելիքները	Պետք է իմանա՝ 1. ռեկրեացիոն ռեսուրսների տեսակները, 2. սպառողի զբոսաշրջային կարիքների բացահայտման մեթոդները, 3. զբոսաշրջային ոլորտը կարգավորող գործող օրենսդրությունը, 4. տեղեկատվական բազայի օգտագործման տեխնոլոգիաները, 5. վիճակագրական տվյալների վերլուծության մեթոդները, 6. շուկայաբանության հիմունքները և դրանց ուսումնասիրման մեթոդները զբոսաշրջության ոլորտում, 7. գովազդային ապրանքի տեսակները և դրա մշակման տեխնոլոգիաները, 8. գործարար փաստաթղթերի ձևակերպման կանոնները, 9. զբոսաշրջիկների ելքի և մուտքի արտոնագրերի տրամադրման կանոնակարգերը, 10. ներքին և միջազգային ուղևորափոխադրման ծառայությունների կազմակերպման ընթացակարգերը, 11. զբոսաշրջային ծառայությունների մատուցման ժամանակ անվտանգության և բժշկական սպասարկման ապահովման ընթացակարգերը:
VII. Կարողությունները և հմտությունները	Պետք է ունենա՝ 1. թիմում աշխատելու և թիմային աշխատանքներ կազմակերպելու կարողություններ, 2. տեղեկատվության հավաքման, ուսումնասիրման, ընդհանրացման հմտություններ, 3. վերլուծություն և եզրահանգումներ կատարելու կարողություններ, 4. օտար լեզվով հաղորդակցվելու հմտություններ, 5. գործարար հաղորդակցման հմտություններ,

	6. զբոսաշրջային փաթեթներ կազմելու կարողություններ, 7. զբոսաշրջության ոլորտի շուկան ուսումնասիրելու կարողություններ, 8. անկանխատեսելի իրավիճակներում կողմնորոշվելու և ճիշտ որոշումներ ընդունելու կարողություններ, 9. պատվիրատուի պահանջներին համապատասխան լուծումներ առաջարկելու կարողություններ, 10.առկա ռեսուրսների ռացիոնալ օգտագործման տարբերակների ընտրության կարողություններ, 11. համակարգչային հմտություններ 12.ձեռներեցության հմտություններ:
VIII. Անձի որակական հատկանիշներ	Պարտաճանաչություն, ազնվություն, կարգապահություն, թիմային աշխատանքում հաղորդակցություն և պատրաստակամություն, իրավիճակներում արագ կողմնորոշվելու և ինքնուրույն օպտիմալ որոշումներ կայացնելու ունակություն՝ ընձեռնված իրավունքների սահմաններում, կամային բարձր հատկանիշներ, կոնֆլիկտները հարթելու ունակություն, մարդասիրություն, հոգատարություն, հանդուրժողականություն, համբերատարություն: